ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

«28» դեկտեմբերի 2016 թ. N 329/Ա

*ք. Ստեփանակերտ*

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը կանոնակարգելու և նախարարության համակարգող ոլորտներում պետական քաղաքականության իրականացմանն ուղղված ծրագրերն իրագործելու նպատակով հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Հաստատել ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության 2017 թվականի աշխատանքային պլանը /կցվում է/:

2. ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի փոխնախարարներին, աշխատակազմի ղեկավարին, վարչությունների և տեսչությունների պետերին ու բաժինների վարիչներին՝

Ի ղեկավարումն և ի կատարումն ընդունել ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության 2017 թվականի աշխատանքային պլանը:

3. Ընդհանուր բաժնին՝ ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության 2017 թվականի աշխատանքային պլանը բազմացնել և տրամադրել նախարարության ստորաբաժանումներին, շրջվարչակազմերի ու Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության և սպորտի բաժիններին:

Ս. ԱՍՐՅԱՆ

Հաստատված է
ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարի
« » դեկտեմբերի 2016 թ. N հրամանով

# ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
# 2017 թ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

| h/h | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարողը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1. | ԼՂՀ նախագահի, ԼՂՀ Ազգային ժողովի, ԼՂՀ կառավարության՝ ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության ոլորտներին վերաբերող հանձնարարականների, որոշումների, օրենքների ուսումնասիրում և կատարում | տարվա ընթացքում | վարչություններ, տեսչություններ, բաժիններ |
| 2. | Վարչակազմերի, բաժինների ու ենթակա հիմնարկների, հաստատությունների կողմից նախարարության ընդունած հրամանների, կարգադրությունների, որոշումների և իրահանգչական փաստաթղթերի գործառության իրագործման վերահսկում | տարվա ընթացքում | վարչություններ, տեսչություններ, բաժիններ |
| 3. | Վերադաս մարմիններից, տարբեր հիմնարկ-ձեռնարկություններից ստացված գրությունների ընթացքավորում, անհատական և կոլեկտիվ դիմում-բողոքների և գրությունների քննարկում, համապատասխան միջոցների ձեռնարկում | տարվա ընթացքում | վարչություններ, տեսչություններ, բաժիններ |
| 4. | ԼՂՀ նախագահին առընթեր տեղեկատվության գլխավոր վարչությանը համակարգի ոլորտների ամսական հաշվետվությունների և աշխատանքային պլանների ներկայացում | յուրաքանչյուր ամսվա վերջին օրերին | վարչություններ, տեսչություններ |
| 5. | Նախարարության վարչությունների ու բաժինների մասնագետների աշխատանքային պարտականությունների բաշխում | հունվար | փոխնախարարներ, վարչությունների եւ տեսչությունների պետեր |
| 6. | Հաճախորդների ընդունելություն | ըստ սահմանված կարգի | նախարար, փոխնախարարներ վարչ. պետեր, բաժնի վարիչներ |
| 7. | ԼՂՀ առողջապահության, ԼՂՀ արտաքին գործերի, ԼՂՀ պաշտպանության, ԼՂՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունների, ԼՂՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայության, ԼՂՀ ոստիկանության հետ համատեղ միջոցառումների անցկացում | ըստ համագործակցության պլանների | նախարարություններ, վարչություններ, բաժիններ |
| 8. | ՀՀ կրթության և գիտության, ՀՀ մշակույթի, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի, ՀՀ պաշտպանության նախարարությունների հետ համատեղ միջոցառումների անցկացում | ըստ համագործակցության պլանների | նախարարություններ, վարչություններ |
| 9 | Համակարգի մասնագետների վերապատրաստման գործընթացի ապահովում | տարվա ընթացքում | Համաձայն ԼՂՀ ԿԳՍ նախարարության, ՀՀ ԿԳ նախարարության, ԿԱԻ ԼՂՀ մասնաճյուղի պլանի |

## 2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

| հ/հ | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարողը |
|---|---|---|---|
| 1. | ԼՂՀ օրենքների, ԼՂՀ կառավարության որոշումների, նախագծերի մշակում և քննարկում ըստ համակարգի ոլորտների | տարվա ընթացքում | վարչություններ, տեսչություն, բաժիններ |
| 2. | Կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լիցենզավորման և հավատարմագրման գործընթացի իրականացում | տարվա ընթացքում | լիցենզավորման և հավատարմագրման հանձնաժողով, կրթության և գիտության վարչություն |
| 3. | ԼՂՀ հանրակրթական դպրոցների տնօրենների հավաստագրումների և ուսուցիչների ատեստավորման նախապատրաստական աշխատանքների իրականացում | տարվա ընթացքում | կրթության և գիտության վարչություն |
| 4. | Մասնագիտական, մեթոդական գրականության և տեղեկատվական ժողովածուների հրատարակում «Լուսարար» պաշտոնաթերթի ու «Կրթությունը և գիտությունը Արցախում» հանդեսի բաժանորդագրության, հրատարակման և առաքման գործընթացի կազմակերպում | տարվա ընթացքում | կրթության և գիտության վարչություն, խմբագրակազմ, հրատարակչական խորհուրդ |
| 5. | Նախարարության աշխատակազմի քաղծառայողների թափուր պաշտոնների մրցույթների կազմակերպում | տարվա ընթացքում | աշխատակազմի ղեկավար |
| 6 | Նախարարության աշխատակազմի քաղծառայողների վերապատրաստում և ատեստավորում | տարվա ընթացքում | աշխատակազմի ղեկավար |
| 7 | ԼՂՀ ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական բազայի համալրում | տարվա ընթացքում | աշխատակազմի ղեկավար |

## 3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄՆ՝ ԸՍՏ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈԼՈՐՏՆԵՐԻ

### 3.1. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

### ա/ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

| Հ/Հ | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարողը |
|---|---|---|---|
| 1. | Աշխատանքներ տանել ՀՀ պետական բուհերում ԼՂՀ-ին հատկացված պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/ տեղերում սովորող ուսանողներին դրամական փոխհատուցում տալու համար | ուսումնական տարվա կտրվածքով | բաժնի վարիչ, առաջատար մասնագետ |
| 2. | ԼՂՀ գիտական կադրերի երիտասարդացման համար Հայաստանի Հանրապետության առաջատար բուհերում և գիտակրթական հաստատություններում 2017-2018 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելության տեղերի հայտի կազմում և ուղարկում ՀՀ կրթության և գիտության նախարարություն | հունվար | բաժնի վարիչ |
| 3. | ԼՂՀ բուհերի, միջին մասնագիտական և նախնական մասնագիտական /արհեստագործական/ ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման 2017-2018 ուստարվա անվճար և վճարովի ուսուցման տեղերի պլանավորում | փետրվար | վարչություն, բուհեր, ՄՄՈՒՀ-ներ,նախնական մասնագիտական /արհեստագործ. ուսումնարաններ/ |
| 4. | ՀՀ պետական բուհերում ԼՂՀ-ին հատկացվելիք նպատակային տեղերի պլանավորում | փետրվար | վարչություն, բաժին |

| | | | |
|---|---|---|---|
| 5. | Արցախի պետական համալսարանի առկա ուսուցման մագիստրատուրայի և ասպիրանտուրայի, «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի մագիստրատուրայի 2017-2018 ուստարվա մասնագիտությունների ցանկի և անվճար ու վճարովի ուսուցման տեղերի պլանավորում | փետրվար | վարչություն, Արցախի պետական համալսարան, «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամ |
| 6. | ԼՂՀ բուհերի, միջին մասնագիտական և նախնական մասնագիտական /արհեստագործական/ ուսումնական հաստատությունների շրջանավարտների ավարտական փաստաթղթերի հայտերի կազմում և ուղարկում ՀՀ ԿԳ նախարարություն | փետրվար | բաժին |
| 7. | Արցախի պետական համալսարանի և ԼՂՀ-ին հատկացված ՀՀ պետական բուհերի նպատակային տեղերի բակալավրի որակավորմամբ շրջանավարտների համար ՀՀ պետական բուհերի 2017-2018 ուստարվա մագիստրատուրայի ընդունելության անվճար ուսուցման տեղերի պլանավորում | ապրիլ-մայիս | բաժին |
| 8. | ԼՂՀ ոչ պետական բուհերի նախորդ տարիների շրջանավարտների պետական նմուշի դիպլոմ ստանալու համար ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպում | ապրիլ-մայիս | բաժին |
| 9. | Մասնակցություն ԼՂՀ և ՀՀ պետական բուհերում ԼՂՀ-ին հատկացված տեղերի 2017թ. ընդունելության կարգի մշակման աշխատանքերին | մայիս | վարչություն, բաժին |
| 10. | ԼՂՀ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2017 թ. ընդունելության կանոնների մշակում | մայիս | վարչություն, բաժին |
| 11. | ԼՂՀ բուհերի, ՄՄՈՒՀ-ների և նախնական մասնագիտական /արհեստագործական/ ուսումնական հաստատությունների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների թեկնածությունների հաստատում | մայիս | նախարար |
| 12. | ԼՂՀ բուհերի, ՄՄՈՒՀ-ների և նախնական մասնագիտական /արհեստագործական/ ուսումնական հաստատությունների ամփոփիչ ատեստավորման ընթացքի վերահսկում | մայիս-հունիս | բաժին |
| 13. | Օտարերկրյա բարձրագույն ուսումնական կամ գիտակրթական հաստատություններում ԼՂՀ քաղաքացիների կրթության և կեցության վճարների փոխհատուցման աշխատանքերի կազմակերպում | հունիս-օգոստոս | բաժնի վարիչ, գլխավոր մասնագետ |
| 14. | ԼՂՀ բուհերի շրջանավարտների համար ավարտական փաստաթղթերի ստացման հայտի ուսումնասիրում և ուղարկում ՀՀ ԿԳ նախարարություն | հունիս-հուլիս | բաժնի վարիչ, գլխավոր մասնագետ |
| 15. | ԼՂՀ ՄՄՈՒՀ-ների և նախնական մասնագիտական /արհեստագործական/ ուսումնարանների ուսումնական պլանների վերանայում ու հաստատում | սեպտեմբեր | նախարար, վարչություն, բաժին |
| 16. | Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանի կրթական գործունեության՝ ԼՂՀ օրենսդրության համապատասխանության ուսումնասիրում և վերահսկողության իրականացում | սեպտեմբեր | բաժին |
| 17. | Ստեփանակերտի Թամարա Քամալյանի անվան բժշկական քոլեջի կրթական գործունեության՝ ԼՂՀ օրենսդրության համապատասխանության ուսումնասիրում և վերահսկողության իրականացում | սեպտեմբեր | բաժին |

| | | | |
|---|---|---|---|
| 18. | ԼՂՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների մագիստրատուրա հաշվեգրված ուսանողների անձնական գործերի ուսումնասիրում | սեպտեմբեր | բաժին |
| 19. | Շուշիի Ա. Խաչատրյանի անվան հումանիտար քոլեջի կրթական գործունեության՝ ԼՂՀ օրենսդրության համապատասխանության ուսումնասիրում և վերահսկողության իրականացում | հոկտեմբեր | բաժին |
| 20. | Շուշիի «Եզնիկ Մոզյան» արհեստագործական ուսումնարանի կրթական գործունեության՝ ԼՂՀ օրենսդրության համապատասխանության ուսումնասիրում և վերահսկողության իրականացում | հոկտեմբեր | բաժին |
| 21. | «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի կրթական գործունեության՝ ԼՂՀ օրենսդրության համապատասխանության ուսումնասիրում և վերահսկողության իրականացում | հոկտեմբեր | բաժին |
| 22. | «ԼՂՀ կառավարության 2015 թ. դեկտեմբերի 28-ի N910-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ կառավարության 2016 թվականի մայիսի 4-ի N210 –Ն որոշման ընթացքի 2017-2018 ուսումնական տարվա կտրվածքով համապատասխան աշխատանքների ապահովում | հոկտեմբեր | բաժին,<br>առաջատար մասնագետ |
| 23. | «ԼՂՀ կառավարության 2008 թ. փետրվարի 14-ի N66 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԼՂՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 13-ի N745-Ն որոշման ընթացքի 2017-2018 ուսումնական տարվա կտրվածքով համապատասխան աշխատանքների ապահովում | հոկտեմբեր | բաժին,<br>առաջատար մասնագետ |
| 24. | Մարտունու արհեստագործական ուսումնարանի կրթական գործունեության՝ ԼՂՀ օրենսդրության համապատասխանության ուսումնասիրում և վերահսկողության իրականացում | հոկտեմբեր | բաժին |
| 25. | Աշխատանքներ տանել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության հետ պայմանավորվածության համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից 2013, 2014, 2015 2016 և 2017 թվականներին Հայաստանի Հանրապետության պետական բուհեր ընդունված և անվճար ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողների՝ ըստ բուհերի պետական բյուջեով սահմանված մեկ ուսանողի ծախսերի չափով 2017-2018 ուսումնական տարվա ֆինանսական միջոցները փոխհատուցելու ուղղությամբ | հոկտեմբեր | բաժնի պետ,<br>գլխավոր մասնագետ |
| 26. | «ԼՂՀ պետական և հավատարմագրված ոչ պետական բուհերի, միջին մասնագիտական և նախնական մասնագիտական /արհեստագործական/ ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման 2018-2019 ուստարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկի հաստատման մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագծի մշակում | նոյեմբեր | փոխնախարար,<br>վարչություն,<br>բաժին |
| 27. | Մասնակցություն ԼՂՀ պետական բուհերում, միջին մասնագիտական և նախնական մասնագիտական /արհեստագործական/ ուսումնական հաստատություններում տարեվերջյան հաշվետու ժողովներին | դեկտեմբեր | նախարար,<br>փոխնախարար,<br>վարչության պետ,<br>բաժնի պետ |
| 28. | Արցախի գիտական կենտրոնի 2017 թվականի կատարած թեմաների հաշվետվությունների ուսումնասիրում | դեկտեմբեր | բաժնի վարիչ,<br>գլխ. մասնագետ |
| 29. | Ամենամյա գիտամեթոդական աշխատանքների ստուգատես-մրցույթի կազմակերպում և անցկացում | դեկտեմբեր | վարչություն,<br>բաժին, ԱրՊՀ |
| 30. | «Տարվա լավագույն ուսանող» հանրապետական մրցույթի կազմակերպում և անցկացում | դեկտեմբեր | վարչություն,<br>բաժին |

## բ/ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

| Հ/Հ | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարողը |
|---|---|---|---|
| 1 | Ճշտել ԼՂՀ հանրակրթական դպրոցների շրջանավարտների համար անհրաժեշտ ավարտական փաստաթղթերի պահանջարկը և պատվիրել՝ ըստ անհրաժեշտ քանակի | 1-ին եռամսյակ | բաժնի վարիչ |
| 2 | Վերահսկել ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի շրջանային /քաղաքային/ փուլի առաջադրանքների կազմումը նախարարության մասնագետների կողմից և դրանց առաքումը շրջվարչակազմերի ու Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության և սպորտի բաժիններ | հունվար-փետրվար | վարչության պետ, բաժնի վարիչ, նախարարության մասնագետներ |
| 3 | Վերահսկել Արցախյան շարժման տարելիցին նվիրված՝ հանրակրթական դպրոցներում իրականացվող տարաբնույթ միջոցառումների ընթացքը | 1-ին եռամսյակ | վարչություն, բաժին |
| 4 | ԼՂՀ պաշտպանության բանակի հետ համատեղ միջոցառումների շրջանակներում վերահսկել և անցկացնել ԼՂՀ հանրակրթական դպրոցների 9-12-րդ դասարանների սովորողների միջև ստեղծագործական շարադրությունների մրցույթի շրջանային և հանրապետական փուլերը՝ նվիրված Շուշիի ազատագրման 25-րդ տարեդարձին | մարտ-ապրիլ | վարչություն, բաժնի վարիչներ, մասնագետներ |
| 5 | Կազմակերպել հանդիպում ստեղծագործական շարադրությունների մրցույթում հաղթող ճանաչված աշակերտների ու ժամկետային զինծառայողների հետ և հանդիսավոր կերպով կատարել պարգևատրումները | ապրիլ-մայիս | նախարար, վարչության պետ, բաժնի վարիչ |
| 6 | Համատեղ աշխատանքներ տանել ԼՂՀ վարչակազմերի աշխատակազմերին կից անչափահասների հետ տարվող աշխատանքների գծով հանձնաժողովների հետ՝ սովորողների կողմից կարգազանցության դեպքեր չթույլատրելու, հանրակրթական դպրոցներում չընդգրկված երեխաներին արհեստագործական ուսումնարաններում և դպրոցներում ընդգրկելու ուղղությամբ | տարվա ընթացքում | վարչություն, բաժին |
| 7 | Կազմակերպել և անցկացնել ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլը | փետրվար-մարտ | վարչություն |
| 8 | «Այբ» կրթական հիմնադրամի հետ համաձայնագրի շրջանակներում աջակցել «Կենգուրու» մաթեմատիկական խաղ-մրցույթի, «Դիջիթեք» և «էկոտուր» ամենամյա ստուգատես-մրցույթների անցկացման կազմակերպչական աշխատանքներին | մարտ | վարչություն, բաժին |
| 9 | ՀՀ ԿԳ նախարարության օժանդակությամբ կազմակերպել և անցկացնել հանրակրթական դպրոցների մանկավարժական աշխատողների հերթական նախաատեստացիոն վերապատրաստման դասընթացներ | մարտ | վարչություն, բաժին, շրջվարչ. /Ստեփ.քաղ./ աշխատակազմ. կրթ.և սպորտի բաժիններ |
| 10 | Հանրապետության ուսուցիչների և բարձր դասարանցիների համար կատարել դպրոցականների առարկայական օլիմպիադաների առաջադրանքների վերլուծություն և հրապարակել «Լուսարար» թերթում | մարտ-ապրիլ | ԱրՊՀ դասախոսներ, նախարարության մասնագետներ |
| 11 | Ըստ ժամանակացույցի ապահովել ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի հաղթողների մասնակցությունը ՀՀ-ում անցկացվող օլիմպիադայի եզրափակիչ փուլին | մարտ-ապրիլ | վարչություն, բաժին |

| | | | |
|---|---|---|---|
| 12 | Ամփոփել ԼՂՀ դպրոցականների առարկայական օլիմպիադայի արդյունքները, դրանք քննարկել նախարարին կից խորհրդակցությունում և արդյունքների մասին հանդես գալ «Լուսարար» պաշտոնաթերթում | ապրիլ | վարչության պետ |
| 13 | Կազմակերպել հանդիպում օլիմպիադայի հանրապետական և եզրափակիչ փուլերում մրցանակային տեղեր գրաված աշակերտների եւ նրանց դասավանդող ուսուցիչների հետ՝ պարգևատրման նպատակով | ապրիլ | նախարար, փոխնախարարներ, վարչություն, բաժին |
| 14 | Վերահսկել հանրակրթական դպրոցներում պետական ավարտական և էքստեռն կարգով անցկացվող քննությունների ընթացքը և ԳԹԿ-ի հետ համագործակցության շրջանակներում մասնակցել միասնական քննությունների անցկացման նախապատրաստական և ընթացիկ աշխատանքներին | տարվա ընթացքում | վարչություն, բաժին, ԳԹԿ |
| 15 | ԼՂՀ պաշտպանության բանակի հետ համագործակցության շրջանակներում, Մայիսյան եռատոնի հետ կապված, մասնակցել հանրակրթական դպրոցների աշակերտների եւ Մեծ հայրենականի ու Արցախյան պատերազմի վետերանների հետ կազմակերպվող հանդիպումներին | մայիս | վարչություն |
| 16 | Աշակերտների ճիշտ կողմնորոշման նպատակով ԼՂՀ հանրակրթական դպրոցների 9-րդ դասարանների աշակերտների շրջանում բացատրական աշխատանքներ տանել միջին և նախնական մասնագիտական /արհեստագործական/ ուսումնական հաստատությունների ու ավագ դպրոցի դերի և նշանակության մասին | տարվա ընթացքում | ԿԳ վարչություն, բաժին, շրջվարչ. /Ստեփ.քաղ/ կրթ. և սպորտի բաժիններ |
| 17 | Ուսումնասիրել «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն աշակերտ» մրցույթների շրջանային փուլում հաղթող ճանաչված եւ հանրապետական փուլին մասնակցելու իրավունք նվաճած դպրոցների տնօրենների, ուսուցիչների և աշակերտների հանրապետական հանձնաժողովին ներկայացրած փաստաթղթերը | 2-րդ եռամսյակ | վարչության պետ, հանրապետական հանձնաժողովի անդամներ |
| 18 | Ուսումնասիրել «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթների շրջանային փուլում հաղչող ճանաչված ու հանրապետական փուլին մասնակցելու իրավունք նվաճած դպրոցների տնօրենների և ուսուցիչների գործունեությունը տեղերում ու առաջարկություններ ներկայացնել հանրապետական հանձնաժողովի նախագահին | 2-րդ եռամսյակ | վարչության պետ, հանրապետական հանձնաժողովի անդամներ |
| 19 | ԼՂՀ հանրակրթական դպրոցների և արհեստագործական ուսումնարանների շրջանավարտների համար ձեռք բերել անհրաժեշտ ավարտական փաստաթղթեր և կատարել բաշխում | 2-րդ եռամսյակ | բաժնի վարիչ |
| 20 | Նախարարության կողմից ձեռք բերված մեթոդական գրականությունը, դպրոցական նոր դասագրքերը, համապատասխան ծրագրերը, դասամատյանները, ուսուցիչների ձեռնարկները առաքել շրջվարչակազմերի /Ստեփանակերտ քաղաքի/ աշխատակազմերի կրթության և սպորտի բաժիններ | 3-րդ եռամսյակ | վարչություն, շրջվարչ. /Ստեփ.քաղ./ աշխատակազմերի կրթ. և սպորտի բաժիններ |
| 21 | ՀՀ շախմատի ակադեմիայի օժանդակությամբ կազմակերպել և անցկացնել հանրակրթական դպրոցների «Շախմատ» առարկան դասավանդող ուսուցիչների հերթական նախաատեստացիոն վերապատրաստման դասընթացներ | 3-րդ եռամսյակ | վարչություն, բաժին, շրջվարչ. /Ստեփ.քաղ./ աշխատակազմ. կրթ.և սպորտի բաժիններ |

| | | | |
|---|---|---|---|
| 22 | Հանրապետության բոլոր շրջաններում ուսուցիչների օգոստոսյան խորհրդակցությունները կազմակերպված անցկացնելու նպատակով մշակել պլան-գրաֆիկ և առաջնորդվել դրանով | օգոստոս | վարչություն, հանրակրթ. բաժին, շրջվարչ. /Ստեփ. քաղ./ կրթ. և սպորտի բաժիններ |
| 23 | Կազմակերպել և անցկացնել «Տարվա լավագույն աշակերտ» մրցույթի հանրապետական փուլը | ապրիլ | վարչության պետ, բաժին |
| 24 | Վերահսկել հանրապետության տարածքում դպրոցահասակ երեխաների հաշվառման և տվյալ օրացուցային տարվա մինչև դեկտեմբերի 31-ը 6 տարեկան լրացած երեխաներին դպրոց ընդգրկելու աշխատանքները | օգոստոս-սեպտեմբեր | բաժին, շրջվարչ. /Ստեփ.քաղ./ աշխատակազմ. կրթ.և սպորտի բաժիններ |
| 25 | Ուսումնասիրել արտերկրից Արցախ տեղափոխված ընտանիքների երեխաների փաստաթղթերը՝ ռուսերենով ուսուցմամբ Ստեփանակերտի հ.3 միջնակարգ դպրոցի համապատասխան դասարաններում նրանց ընդգրկելու նպատակով | օգոստոս-սեպտեմբեր | վարչության պետ, բաժնի վարիչ |
| 26 | Մշակել պլան-գրաֆիկ՝ հանրակրթական դպրոցներում «Գիտելիքի օրը», «Ուսուցչի օրը», «Վերջին զանգի» և մյուս հանդիսավոր կերպով նշվող տարելիցներին մասնակցելու և ընթացքը վերահսկելու նպատակով | ուս.տարվա ընթացքում | վարչություն, շրջվարչ. /Ստեփ.քաղ./ աշխատակազմ. կրթ. և սպորտի բաժիններ |
| 27 | Կազմակերպել և բարձր մակարդակով ու հանդիսավոր կերպով անցկացնել հոկտեմբերի 5-ի՝ Ուսուցչի օրվա տոնակատարությունը | հոկտեմբեր | վարչություն, շրջվարչ. /Ստեփ.քաղ./ աշխատակազմ. կրթ. և սպորտի բաժիններ |
| 28 | «Այբ» կրթական հիմնադրամի հետ համաձայնագրի շրջանակներում աջակցել «Մեղու» և «Ռուսական արջուկ» լեզվագիտական խաղ-մրցույթների անցկացման կազմակերպչական աշխատանքներին | հոկտեմբեր-նոյեմբեր | վարչություն, բաժին |
| 29 | Նպատակասլաց գործունեություն ծավալել հանրակրթական դպրոցներում ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավման և անհրաժեշտ մեթոդական ու մասնագիտական օգնություն ցույց տալու ուղղությամբ: Օժանդակել և մասնակցել հանրակրթական դպրոցներում կազմակերպվող տարաբնույթ միջոցառումներին | ուս.տարվա ընթացքում | վարչություն, բաժին |
| 30 | Աջակցել և մասնակցել Մարտակերտի, Հադրութի, Շահումյանի շրջվարչակազմերի աշխատակազմերի կողմից հենակետային դպրոցներում կազմակերպվող փնջային ու առարկայական մեթոդխորհուրդների նիստերին և ցուցաբերել անհրաժեշտ մասնագիտական և մեթոդական օգնություն | 3-րդ եռամսյակ | վարչություն, բաժին |
| 31 | Մշտապես կապ պահպանել հանրապետության ավագ և հոսքային դպրոցներում գործող առարկայական մեթոդխորհուրդների հետ, աջակցել նրանց աշխատանքներին և մասնակցել նրանց կողմից կազմակերպվող դաս-միջոցառումներին, ընդօրինակման դասերին և մեթոդխորհուրդների նիստերին | ուս.տարվա ընթացքում | վարչություն, բաժին |

| | | | |
|---|---|---|---|
| 32 | Շրջվարչակազմերի /Ստեփանակերտի քաղաքապետարանի/ աշխատակազմերի կրթության և սպորտի բաժինների, արհեստագործական ուսումնարանների ներկայացրած հաշվետվությունների հիման վրա կազմել և ՀՀ ԿԳ նախարարություն ներկայացնել շրջանավարտների համար անհրաժեշտ քանակի ավարտական փաստաթղթերի ստացման և բաշխման մասին հաշվետվություն | 4-րդ եռամսյակ | բաժնի վարիչ |
| 33 | Հիմք ընդունելով ԼՂՀ կառավարության 2009թ. հուլիսի 30-ի «Մանկավարժին այլ վայր ուղեգրելու մասին» N 466 որոշումը՝ հանրակրթական դպրոցներն ապահովել համապատասխան մասնագետներով | ուս.տարվա ընթացքում | վարչության պետ |
| 34 | Վերահսկել շրջվարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության և սպորտի բաժինների կողմից նախարարության ընդունած որոշումների, հրամանների, կարգադրությունների եւ հրահանգչական փաստաթղթերի իրականացման ընթացքը | տարվա ընթացքում | վարչություն |

## *գ/ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱԺԻՆ*

| ՀՀ | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարողը |
|---|---|---|---|
| 1 | Թարմացնել ԼՂՀ նախադպրոցական հաստատությունների տեղեկատվական բազան | հունվար | բաժնի վարիչ |
| 2 | Մասնակցել Ստեփանակերտի ուսումնական հաստատությունների ամանորյա միջոցառումներին | հունվար | բաժնի վարիչ, |
| 3 | Այցելել Ստեփանակերտի հ. 4 մանկապարտեզ՝ ուսումնադաստիարակչական աշխատանքներին ծանոթանալու նպատակով | հունվար | գլխավոր մասնագետ |
| 4 | Այցելել Ստեփանակերտի հանրակրթական դպրոցներ՝ արտադպրոցական միջոցառումներին ծանոթանալու նպատակով | հունվար | բաժնի վարիչ, |
| 5 | ԼՂՀ շրջվարչակազմերի /Ստեփանակերտի քաղաքապետարանի/ կրթության և սպորտի բաժիններին տեղեկացնել տարվա ընթացքում անցկացվելիք մրցույթ-միջոցառումների ժամանակացույցի և անցկացման պայմանների մասին | հունվար | գլխավոր մասնագետ |
| 6 | Կազմակերպել օրինակելի պարապմունք Ստեփանակերտի հ. 1 պետական մանկապարտեզում | փետրվար | բաժին |
| 7 | Այցելել Ստեփանակերտի հ. 2 հիմնական դպրոց՝ արտադպրոցական աշխատանքներին ծանոթանալու և նախադպրոցական աշխատանքային փաթեթները ստուգելու նպատակով | փետրվար | բաժին |
| 8 | Կազմակերպել ԼՂՀ մանկապարտեզների տնօրենների սեմինար-խորհրդակցություն՝ 2017 թվականի ֆինանսա-տնտեսական աշխատանքները վերլուծելու, պարզաբանելու ուղղությամբ | փետրվար | բաժին |
| 9 | Այցելել Ասկերանի մանկական ստեղծագործական կենտրոն՝ ուսումնադաստիարակչական աշխատանքները ստուգելու և անհրաժեշտ մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով | փետրվար | բաժին |
| 10 | Ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքին ծանոթանալու նպատակով այցելել Ստեփանակերտի հ. 1 հիմնական դպրոցի նախադպրոցական խմբեր | փետրվար | բաժին |
| 11 | Ուսումնամեթոդական աշխատանքները ստուգելու նպատակով այցելել Հայ ավետարանչական ընկերակցության մանկապարտեզներ | մարտ | բաժին |

| | | | |
|---|---|---|---|
| 12 | Մասնակցել նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում անցկացվող մայրության տոնին նվիրված միջոցառումներին | մարտ | բաժնի վարիչ |
| 13 | ԱջակցելՍտեփանակերտի հ. 2 մանկապարտեզում անցկացվելիք օրինակելի պարապմունքին | մարտ | գլխավոր մասնագետ |
| 14 | Աջակցել ասմունքի մանկապատանեկան 10-րդ մրցույթ-փառատոնի անցկացմանը | մարտ | բաժնի վարիչ |
| 15 | ԿԳՍՆ և ԼՂՀ <<Մայրություն>> հասարակական կազմակերպության հետ համատեղ կազմակերպել և անցկացնել <<Հայ պատանի ասպետ>> մրցույթը ԼՂՀ 15-17 տարեկան դպրոցականների միջև՝ նվիրված Շուշիի ազատագրման 25-րդ տարեդարձին | ապրիլ | գլխավոր մասնագետ |
| 16 | Կազմակերպել օրինակելի պարապմունք Ստեփանակերտի հ. 3 մանկապարտեզում | ապրիլ | բաժին |
| 17 | Ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքին ծանոթանալու նպատակով այցելել Ստեփանակերտի հ. 10 հիմնական դպրոց | ապրիլ | բաժնի վարիչ |
| 18 | Այցելել Մարտունու հ. 1 և հ. 2 մանկապարտեզներ՝ համալիր ստուգում անցկացնելու նպատակով | ապրիլ | գլխավոր մասնագետ |
| 19 | Այցելել ՀՕՍ-ի մանկապարտեզներ՝ մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով | ապրիլ | բաժին |
| 20 | Մասնակցել մայիսյան եռատոնին նվիրված ուսումնական հաստատությունների անցկացրած միջոցառումներին | մայիս | բաժնի վարիչ |
| 21 | Ստեփանակերտի հանրակրթական դպրոցների նախադպրոցական խմբերում անցկացնել հայ ազգային պարի փառատոն | մայիս | գլխավոր մասնագետ |
| 22 | Այցելել Մարտակերտի պետական մանկապարտեզ՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների դրվածքը ստուգելու նպատակով | մայիս | բաժնի վարիչ |
| 23 | Այցելել <<Լավագույն դաստիարակ>> մրցույթին հայտ ներկայացրած մանկապարտեզներ՝ մրցույթի շրջանային /քաղաքային/ փուլում հաղթող ճանաչված դաստիարակների աշխատանքներին ծանոթանալու նպատակով | հունիս | գլխավոր մասնագետ |
| 24 | Նախապատրաստական աշխատանքներ տանել ամառային ճամբարներ կազմակերպելու ուղղությամբ | հունիս | բաժնի վարիչ |
| 25 | Պատրաստել Հունաստանի հանգստյան ճամբար մեկնող երեխաների փաստաթղթերը | հունիս | գլխավոր մասնագետ |
| 26 | Կազմակերպել տոնական համերգ՝ նվիրված երեխաների իրավունքների պաշտպանության օրվան | հունիս | բաժին |
| 27 | Այցելել Հադրութի պետական մանկապարտեզ՝ մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով | հուլիս | բաժնի վարիչ |
| 28 | Աջակցել ԵՊՀ-ի կողմից անցկացվող ասմունքի մրցույթի անցկացմանը | հուլիս | գլխավոր մասնագետ |
| 29 | Այցելել Ստեփանակերտի հ. 6 մանկապարտեզ՝ մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով | օգոստոս | բաժին |
| 30 | Այցելել Մարտունու շրջանի Գիշու մանկապարտեզ՝ մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով | օգոստոս | բաժին |
| 31 | Ամփոփել <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթի արդյունքները և ներկայացնել տեղեկանք մրցույթի հանրապետական հանձնաժողովին | սեպտեմբեր | բաժնի վարիչ |
| 32 | Այցելել Ստեփանակերտի հ. 5 մանկապարտեզ ուսումնադաստիարակչական աշխատանքներին ծանոթանալու նպատակով | սեպտեմբեր | գլխավոր մասնագետ |
| 33 | ԼՂՀ նախադպրոցական հաստատություններն ապահովել աշխատանքային փաթեթներով և թարմ ծրագրերով | սեպտեմբեր | բաժին |

| | | | |
|---|---|---|---|
| 34 | Այցելել Շուշիի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն՝ ուսումնադաստիարակչական աշխատանքներին ծանոթանալու նպատակով | սեպտեմբեր | բաժին |
| 35 | Աջակցել <<Ուսուցչի օրվան>> նվիրված հանդիսավոր երեկոյի անցկացմանը | հոկտեմբեր | բաժին |
| 36 | Կազմակերպել օրինակելի պարապմունք Ստեփանակերտի հ. 4 մանկապարտեզում | հոկտեմբեր | բաժին |
| 37 | Այցելել Մարտակերտի շրջանի Վանք գյուղի պետական մանկապարտեզ՝ մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով | հոկտեմբեր | բաժնի վարիչ |
| 38 | Այցելել Ստեփանակերտի հ. 4 հիմնական դպրոց՝ արտադպրոցական աշխատանքների դրվածքը ստուգելու նպատակով | նոյեմբեր | գլխավոր մասնագետ |
| 39 | Անցկացնել օրինակելի պարապմունք Ստեփանակերտի հ. 1 դպրոցի նախադպրոցական խմբերում | նոյեմբեր | բաժին |
| 40 | Արցախի հոգևոր թեմի ներկայացուցիչների հետ համատեղ այցելել Ստեփանակերտի հանրակրթական դպրոցները՝ երեխաների հոգևոր դաստիարակությանը ուղղված աշխատանքների դրվածքին ծանոթանալու նպատակով | դեկտեմբեր | բաժնի վարիչ, գլխավոր մասնագետ |
| 41 | Աջակցել նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ազգային, հոգևոր տոների անցկացմանը | դեկտեմբեր | բաժնի վարիչ, գլխավոր մասնագետ |
| 42 | Անցկացնել օրինակելի պարապմունք Ստեփանակերտի հ. 6 հիմնական դպրոցի նախադպրոցական խմբերում | դեկտեմբեր | բաժնի վարիչ, գլխավոր մասնագետ |
| 43 | Մասնակցել Ստեփանակերտի ուսումնական հաստատություններում անցկացվող ամանորյա միջոցառումներին | դեկտեմբեր | բաժնի վարիչ, գլխավոր մասնագետ |
| 44 | Պլանավորել 2018 թվականին բաժնի կողմից կատարվող աշխատանքները | դեկտեմբեր | բաժին |

*դ/ ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ, ՖԻԶԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆ*

*ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ*

| *Հ/Հ* | *Աշխատանքի բովանդակությունը* | *Կատարման ժամկետը* | *Կատարողը* |
|---|---|---|---|
